

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՄԻՋԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌՈՄ**  
**ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ**  
**ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր, գիտակցելով հարկման բնագավառում համակարգված տնտեսական բարեփոխումների իրականացմանն ուղղված համաձայնեցված հարկային քաղաքականության անցկացմանը անհրաժեշտությունը, ելնելով հարկային օրենսդրության պահպանման հարցերով միջպետական համագործակցության եւ փոխադարձ օգնության կարելությունից, այդ թվում հարկային իրավախախտումների եւ հանցագործությունների կանխման, բացահայտման ու խափանման հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման համար, այդ նպատակով ցանկանալով միմյանց օժանդակություն ցուցաբերել, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

**ՀՈՂՎԱԾ 1**

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող հասկացությունները նշանակում են.

հարկային օրենսդրություն՝ իրավական նորմերի համակցություն, որոնք սահմանում են հարկերի եւ գանձումների տեսակները, Կողմերի տարածքներում դրանց գանձման եւ հարկային պարտավորությունների ծագման, փոփոխման ու դադարեցման հետ կապված հարաբերությունները կարգավորող կարգը,

հարկային օրենսդրության խախտում՝ հակաիրավական արարք, որն արտահայտվում է հարկատուների կողմից հարկերի եւ գանձումների մասին օրենսդրության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մեջ, որի համար Կողմերի ազգային օրենսդրություններով սահմանված է պատասխանատվություն,

իրավասու մարմիններ՝ պետական մարմիններ, որոնց վրա Կողմերի ազգային օրենսդրություններով դրված է հարկային օրենսդրության պահպանման, հարկերի եւ գանձումների ստացման եւ այդ բնագավառում խախտումների հետ պայքարի կազմակերպման նկատմամբ հսկողությունը,

հարցում օժանդակություն մասին՝ հարկային օրենսդրության պահպանման եւ այդ բնագավառում խախտումների հետ պայքարի հարցերում օժանդակություն ցուցաբերելու մասին հարցում,

հարցող իրավասու մարմին՝ Կողմի իրավասու մարմինը, որն օժանդակության մասին հարցում է կատարում,

հարցվող իրավասու մարմին՝ Կողմի իրավասու մարմին, որը ստանում է օժանդակության մասին հարցումը:

**ՀՈՂՎԱԾ 2**

Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում Կողմերի իրավասու մարմինների համագործակցությունը եւ փոխադարձ օգնությունը հարկային օրենսդրության պահպանման եւ այդ բնագավառում խախտումների հետ պայքարի հարցերով:

Կողմերի իրավասու մարմինները համագործակցում են սույն Համաձայնագրի շրջանակներում՝ ղեկավարվելով իրենց պետությունների ազգային օրենսդրություններով եւ միջազգային պարտավորություններով:

Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտում իրավասու մարմինների համագործակցությանը Կողմերի միջեւ կնքված այլ համաձայնագրերին համապատասխան, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների եւ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների միջեւ:

### ՀՈՂՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի իրավասու մարմինները իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան օգտագործում են համագործակցության հետեւյալ ձեւերը.

տեղեկությունների տրամադրում հարկային ազգային համակարգերի, հարկային օրենսդրությունում փոփոխությունների եւ լրացումների, ինչպես նաեւ հարկային օրենսդրության խախտումների կանխման, բացահայտման եւ խափանման վերաբերյալ մեթոդական երաշխավորությունների մասին,

տեղեկությունների փոխանակում հարկատուների կողմից հարկային օրենսդրության պահպանման մասին, ներառյալ հարկային օրենսդրության խախտումների հետ կապված տեղեկությունները,

փոխգործակցություն հարկային օրենսդրության խախտումների կանխմանը, բացահայտմանը եւ խափանմանն ուղղված միջոցառումների անցկացման գործում, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հարկման հետ կապված փաստաթղթերի համապատասխան ձեւով վավերացված պատճենների տրամադրում,

Կողմերի իրավասու մարմինները աշխատանքը ապահովող կապի էլեկտրոնային միջոցների ստեղծման, գործունեության եւ փոխգործակցության փորձի փոխանակում եւ փոխադարձ օգնության ցուցաբերում,

համագործակցության գործընթացում ծագող հարցերով աշխատանքային խմբերի ստեղծում եւ փորձագետների փոխանակում,

օժանդակություն կադրերի պատրաստման եւ վերապատրաստման գործում, գիտապրակտիկ համաժողովների, սեմինարների անցկացում եւ համագործակցության այլ ձեւերի օգտագործում, որոնք պահանջում են համատեղ գործողություններ:

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված հարցերով, Կողմերի իրավասու մարմինները փոխգործակցում են միմյանց հետ անմիջականորեն:

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության իրագործման կոնկրետ ձեւերը սահմանվում են Կողմերի իրավասու մարմինների միջեւ կնքված համապատասխան պայմանագրերով:

### ՀՈՂՎԱԾ 4

Հարկային օրենսդրության խախտումների մասին տեղեկությունների փոխանակումը նախատեսում է օժանդակության մասին հարցման հիման վրա սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի դրույթներին համապատասխան տվյալների տրամադրում, որոնք վերաբերում են.

հարկատուների գրանցմանը, ներառյալ նրանց գտնվելու վայրի, ենթակայության, սեփականության ձեւի եւ այլ տվյալներ,

հարկման օբյեկտներին եւ Կողմերի տարածքներում ստացված եկամուտներին, հարկերի վճարված գումարներին կամ հարկման հետ կապված այլ տեղեկություններին, պետական եւ առետրային բանկերում հարկատուների հաշիվների առկայությանը Կողմերի օրենսդրությունների պահանջներին համապատասխան,

Կողմերի իրավասու մարմինների լիազորությունների շրջանակներում այլ տեղեկություններին:

Տեղեկատվությունը տրամադրվում է մի Կողմի իրավասու մարմնի կողմից մյուս Կողմի իրավասու մարմինների օժանդակության մասին հարցման հիման վրա, պայմանով, որ նման տեղեկատվության տրամադրումը չի հակասում հարցվող Կողմի ազգային օրենսդրությանը:

Եթե Կողմերից որեւէ մեկի իրավասու մարմինները համարում են, որ իրենց տրամադրության տակ եղած տեղեկություններում շահագրգռված են մյուս Կողմի իրավասու մարմինները, ապա նրանք կարող են տրամադրել այդ տեղեկությունները սեփական հայեցողությամբ:

### ՀՈՂՎԱԾ 5

Հարկային օրենսդրության խախտումների կանխման, բացահայտման եւ խափանման ուղղությամբ միջոցառումների անցկացման դեպքում Կողմերի իրավասու մարմինների փոխգործակցությունը կարող է ներառել համատեղ պլանավորումը, միջոցների օգտագործումը եւ փորձագետների ներգրավումը, այդ միջոցառումների անցկացման ընթացքի եւ արդյունքների մասին տեղեկությունների փոխանակումը:

#### ՀՈՂՎԵՐ 6

Օժանդակության մասին հարցումը պետք է փոխանցվի գրավոր ձևով կամ հեռատիպային, ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցներով:

Հեռատիպային, ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցների օգտագործման եւ հարցման իսկության կամ նրա բովանդակության վերաբերյալ կասկածանքների առաջացման դեպքում հարցվող իրավասու մարմինը կարող է գրավոր դիմել հաստատման համար:

Օժանդակության մասին հարցումը պետք է պարունակի.

հարցող իրավասու մարմնի անվանումը,

հարցվող իրավասու մարմնի անվանումը,

հարկատուի տվյալները, որի վերաբերյալ հարցում է կատարվում,

հարցման եւության հակիրճ շարադրումը եւ դրա հիմնավորումը, ինչպես նաեւ

հարցման կատարման համար անհրաժեշտ այլ տվյալներ,

անհրաժեշտության դեպքում, տրամադրվող փաստաթղթերի պատճենների վավերացման կարգը:

Օժանդակության մասին հարցումը եւ դրա պատասխանը կազմվում են ռուսերեն կամ ազգային լեզվով՝ կցելով ռուսերեն թարգմանված վավերացված օրինակը:

Հարցվող իրավասու մարմինը իրավունք ունի պահանջել հարցման կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ:

Հարցվող իրավասու մարմինը օժանդակության մասին հարցման հիման վրա ներկայացնում է նորմատիվ ակտեր, փաստաթղթերի իր կողմից վավերացված պատճեններ եւ հարցման կատարման համար անհրաժեշտ այլ նյութեր:

Փաստաթղթերի եւ այլ նյութերի բնօրինակները կարող են տրամադրվել համաձայնեցված ժամկետով:

#### ՀՈՂՎԵՐ 7

Կողմերը պարտավորվում են պահպանել կոնկրետ հարկատուներին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը եւ ապահովել պաշտպանության ռեժիմը Կողմերի ազգային օրենսդրություններին եւ հարցվող իրավասու մարմնի պահանջներին համապատասխան:

Ստացված տեղեկությունները Կողմերի իրավասու մարմինները կարող են օգտագործել միայն սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներով, այդ թվում վարչական կամ դատական քննության համար:

Կողմերը պարտավորվում են չթուլյատրել ստացված տեղեկությունների հակաօրինական օգտագործումը:

#### ՀՈՂՎԵՐ 8

Կողմերի իրավասու մարմինները միմյանց օժանդակություն են ցուցաբերում իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան, իրենց իրավասության շրջանակներում:

Հարցող իրավասու մարմինը իր խնդրանքով կարող է տեղեկացվել օժանդակության մասին հարցման ի կատարում իրագործվող գործողությունների անցկացման ժամանակի եւ վայրի մասին, իսկ նրա ներկայացուցիչները լրացուցիչ համաձայնությամբ կարող են ներկա լինել դրանց անցկացման ժամանակ:

Եթե հարցվող իրավասու մարմինը չի կարող կատարել հարցումը, ապա նա հարցումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է հարցող իրավասու մարմնին:

## ՀՈԴՎԱԾ 9

Կողմերի իրավասու մարմինները հոգում են իրենց պետությունների տարածքներում նրանց կողմից սույն Համաձայնագրի կատարման հետ կապված ծախսերը: Լրացուցիչ ծախսեր պահանջող օժանդակության մասին հարցումների ստացման դեպքում, դրանց ֆինանսավորման վերաբերյալ հարցը քննարկվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից փոխադարձ պայմանավորվածությամբ:

Համատեղ միջոցառումներ անցկացնելու դեպքում մյուս Կողմի տարածքում իր աշխատակիցների գործունեության ապահովման հետ կապված ծախսերը հոգում է ուղարկող Կողմը, եթե Կողմերը այլ բան չեն որոշել:

## ՀՈԴՎԱԾ 10

Կողմերը ձգտում են վիճելի հարցերի կարգավորման գործում փոխադարձ համաձայնության ձեռքբերմանը, որոնք կարող են ծագել սույն Համաձայնագրի կիրառման ժամանակ:

Կողմերը, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցություններ են անցկացնում սույն Համաձայնագրի իրագործման ընթացքի գնահատման համար եւ որոշում են դրանց անցկացման ժամկետները:

Սույն Համաձայնագրի դրույթների իրագործման նպատակներով Կողմերը առանձին հարցերով կարող են կնքել լրացուցիչ համաձայնագրեր:

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում այլ միջազգային պայմանագրերին համապատասխան Կողմերի ստանձնած պարտավորությունները:

## ՀՈԴՎԱԾ 11

Յուրաքանչյուր Կողմ սահմանում է իրավասու մարմինների ցանկը եւ փոխանցում է այն Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեն Կողմերից ստացված ծանուցումների հիման վրա ձեւավորում է Կողմերի իրավասու մարմինների ցանկը եւ ուղարկում է այն Համաձայնագրի բոլոր մասնակից պետություններին, ինչպես նաեւ հայտնում է տվյալ ցանկի բոլոր փոփոխությունների մասին:

## ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար այն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

## ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ 5 տարով, եթե Կողմերը այլ որոշում չկայացնեն:

## ՀՈԴՎԱԾ 14

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարել լրացումներ եւ փոփոխություններ, որոնք կձեւակերպվեն արձանագրություններով եւ ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված կարգով:

## ՀՈՂՎԱԾ 15

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

## ՀՈՂՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրը, բոլոր Կողմերի համաձայնությամբ, բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ այդպիսի միացման մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

Կատարված է Մինսկ քաղաքում 1999 թվականի հունիսի 4-ին մեկ բևօրինակով՝ ռուսերեն: Բևօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետության:

\* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի հոկտեմբերի 24-ից: